

ԲՅՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոստիկայի համար 12 3/4
Տարեկան վեցամսեայ Արշակունիսի վեցամսեայ համար 15
Սեփեկայի համար 3 3/4
Տարեկան վեցամսեայ 1.50

ՇԱՐՈՒ

Լատին եւ ցրալ զրկել
Մեխիտիստեանց հաս-
ցելից
Редакция на вѣтъникъ
"Шаржумъ"
Варва
Redaction du journal
"Charjoun"
(Bulgario)
համար
R. P. Kalincian
(Արիւսի)
համար
R. P. Kalincian
(Արիւսի)
համար
Ք. Գ. Կալինցյան
համար
Ք. Գ. Կալինցյան
համար

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ ՀՐԱՏԱՐԱՒՈՒՆ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՈՒ ՍՐԵՐԸ

= 15 ՍԱՆԹԻՄ =
Գրութիւնք եւ չն ցրալի

ՇԱՐՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԳՐՈՒՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԱՆ ԿԱՐԵՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՇԱՐՈՒՄԻ ԲԱԺԱՆԳՐՈՒՆԸ ՈՒՏՈՂ
ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՍԷՂ

Կրկնակի Թօսունեան Զակարիկ
Միջոցեան Աղէքսանդրիա
Ս. Պոստիկայի Աղէքսանդրիա
Մ. Լէօն Աղէքսանդրիա
Երուանգ Փափագեան Գահիրէ
Մ. Ա. Կարնպոսեան Գահիրէ
Յայտարարելով բանեցին ու-
տոններու երկրորդ ցանկը. կառա-
ջարկեց ընդ միւս բաժանորդ-
ներուն որ շտապեն իրենց պարտ-
քերը վճարել:

ԱԶԳ

Աղգարին վարժարանի մը մէջ
երկու տարի պաշտօնավարած և
բարձր պաշտօնավարութեան
համար վկայական ունեցող վար-
ժարի մը պատրաստ է պաշտօն
վարել 600-700 ֆրանք տարե-
կանով:
Պէտք ունեցողները կրնան
գրիմել խմբագրութեան:
Սիլվիէի վարժարաններու
համար ուսուցիչ մը պէտք է:

ԱԻՆԵԼԻ ԼԱԻ

Եթէ ուշի ուշով քննենք մեր
ժողովրդի բարոյական ու մտաւոր
կեանքը, կը տեսնենք որ նա շատ
դանդաղ է բարեփոխում:
Իրա գլխաւոր պատճառը այն
է որ ժողովրդի պակասութիւն-
ները մասնանշողների մեծամաս-
նութիւնը կը բրականութիւնը
ուսուցիչները և մամուլի վարող-
ները, իրենք զուրկ են լուրջ մտա-
ւոր պաշարից, հաստատուն ազնիւ
սկզբունքներից և շատ անգամ
աւելի աղտոտ ու անբարոյական
են, քան թէ ժողովրդի ամենաըն-
կած մի պարզ անգամը:

ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԱՆ

Պետէն եկած մասնաւոր տեղե-
կութիւններու համաձայն հոն հայ
ժողովուրդը այնչափ գիտակից
գործած է որ այլ ևս Օրման-
եանի օյինպարութիւնները ու
Համիտի կայսերական խոստում-
ները բարայի մը արժէքը չունին
անոր քովը: Անշուշտ ժողովրդա-
յին այդ գիտակցութիւնն էր
պատճառը որ կրօնական և ազ-
գային ժողովի համեմատաբար
աւելի հոյրեմտեք անդամներուն
ստիպեց Օրմանեանին վրայ ճն-
շում կործ գնելու որ ան Սուլ-
թանէն քիչ մը հանգստութիւն
պահանջէ թուրքի կոչուած թա-
ւայի մէջ տակուտը հայ ժողովր-
դի համար:

ԳԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Օրմանեանը որ Սուլթանը ա-
մեն մարդէ աւելի ազէկ կը ճանչ-
նայ, գոնէ ըստ երեւոյթիւն են-
թարկուեցաւ գիտակցութեան
հասած ժողովրդի պահանջին, ի
հարկէ նախապէս խտրելու որո-
շումով Իսլամ անշուշտ հիմա ինքն
ալ հասկցաւ որ խտրելու բաժակը
արդէն լեզուած է և այսուհետեւ
իրեն շատառազի պիտի նստի...
Եթէ Օրմանեանի մը պէտ պատ-
րիարք չունենայինք և Սուլթա-
նի մը պէտ օլ Սուլթան գուցէ
Պոլսոյ ժողովուրդը այսչափ շու-
տով իր վիճակի գիտակցութեանը
չը հասնէր: Այսօր նա գիտակից
ու լուրջ վարչ գիտակից ու պայ-
թուցիկ պիտի ըլլայ, եթէ մեր
ժողովուրդն ալ յառաջագիմու-
թեան ու բարեշրջմի բնական
օրինակը համաձայն կը յառաջա-
գրիմէ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

4. Պոլսոյ նեպեմբեր 3

Երկար ատենէ ի վեր է որ կու-
ղէի գրել «Նախնային» գաղափար
մը տարու համար Պոլսոյ նեպեմբեր
հայտնութեան մասին:
Արշաքի որ կրցի անուանիւրիւր,
ժողովուրդը հիմա աւելի իր վի-
ճակին գիտակցութեանը հասած
է և ազնուացած, մասնութիւն-
ներ շատ քիչ, գրեթէ չեն պա-
տահիր: Ժողովրդային գիտակ-
ցութեան ամենաուշագրաւ փաստը
երեւան եկաւ Սուլթանի գահա-
կալութեան օրը: Եկեղեցիին մէջ
երբ Օրմանեանէն Սուլթանի հա-
մար գահաբանական աղօթք և
մաղթանքներ ըրաւ, հոն հաւա-
քուած ժողովրդէն ամէն մը ըսող
չեղաւ:

ՎԱՐՊՈ

Անցեալ օրեր կերթան Վառնա
բնակող «Բարձր» մը քովը
բարեգործական նպատակով ստակ
ինդրուելու որոշ և յայտնի հիմ-
նարկութեան մը կողմէն: Այդ
«Բարձր»-ն, որուն լեզուն բեր-
նին մէջը քիչ մը կը զբառնայ, ու
ստակը իր կեանքէն աւելի շատ
կը սիրէ, քաջութիւնը չունենա-

ՎԱՐՊՈ

Անցեալ օրեր կերթան Վառնա
բնակող «Բարձր» մը քովը
բարեգործական նպատակով ստակ
ինդրուելու որոշ և յայտնի հիմ-
նարկութեան մը կողմէն: Այդ
«Բարձր»-ն, որուն լեզուն բեր-
նին մէջը քիչ մը կը զբառնայ, ու
ստակը իր կեանքէն աւելի շատ
կը սիրէ, քաջութիւնը չունենա-

ՎԱՐՊՈ

Անցեալ օրեր կերթան Վառնա
բնակող «Բարձր» մը քովը
բարեգործական նպատակով ստակ
ինդրուելու որոշ և յայտնի հիմ-
նարկութեան մը կողմէն: Այդ
«Բարձր»-ն, որուն լեզուն բեր-
նին մէջը քիչ մը կը զբառնայ, ու
ստակը իր կեանքէն աւելի շատ
կը սիրէ, քաջութիւնը չունենա-

Ժողովուրդը լուս առ լուսն չլինելու և մեծ մասնով կր յառաջագրվել, սեպական մամուլը, գրականութիւնը ոչինչ կը մատակարարեն անոր, ինքն իրեն է որ կը խմբուի և ըստ իս այդ խմբուումը աւելի արգելանաւէտ պիտի ըլլայ:

Տեղը այս պարտիս կիանքին մէջ ուրիշ աչքի զարնող նորութիւն մը չը կայ որ հարգութեմ, հինք միտքինակորէն կը կրկնուի:

ԱՆՍԱՐԿ

Վեհալուս խմբի անդամներէն մին պ. Յակոբեան ինչ խնդրեց մի թեկնարկան ժողով կազմել, որպէսզի ինքը կարողանայ ազատիլ իր վրայ բարգիւծ մեղանդրանքներէն, որոնք իբր թէ լինում են նրան խմբի քայքայման պատճառը ներկայացնելու համար: Օգտուելով այդ հանգամանքից և համոզված լինելով որ հասարակութիւնը վարանումի մէջ է և չի կարողանում որոշ գաղափար կազմել խմբի անհամաձայնութիւնների մասին և ըստ այնմ քաջալիքով խմբի այս կամ այն հատուածին կամ թէ ջանալ այդ անհամաձայնութիւնները մէջ տեղից վերցնել: սիրով յանձն առայ և դիմեցի պ. պ. դերասան

ԱՐԻՒՆԱՐՔՈՒՆ

(Հայ հեղափոխական կ'ականի պատկեր մը)

Գարնան մէկ հմայրոտ արշալույսին էր: Անու ծովն և որու մրրկածափ կողակները դաժանորէն ամբողջ ձմեռը պարտած էին անասան խարակներու ու շարունակ ծծած էին արեսասան յոխորտանքով Պոնտական նաւահանգիստները, հիմա նազելի հարսի մը հանդարտ մեղմնզանքով կերել իրա Տրապիզոնի առջև ջինջ ու կասկապուտ կերելէրան, որու հէշաօրոր ալձփանքին կընդէլու գնէին արշալույսի պարզութիւնը արփիները աստղափայլ:

Ձկնկուլ թռչուններու հողեր թառած ջուրի գոլմանցի մակերեսովին, գերտոտեալ աչու ընկերով անձրու կենրու վտառներ կը փնտռէին, որոնք անհունորէն հալածական կը վիտային: Տակաւին ոչ մէկ նաւակ ծով ելած էր, սակայն և ոչ մէկ նաւակ վարալ կը համարձակիր իր նաւակը ջուրը քշել հակառակ ծովուն սքանչելի պատշաճութեան ու իրենց սովորական ժամանակին յապաղումին: Թիւփարներու, քիւրք հասարակութեան ու զօրականութեան հոծ ամբոխ մը, տեղագոտ զարնուանքէ մը բոնուած, առտուն կանուխ վազած խոնուած էր Տրապիզոնի նաւահանգիստը, և ահուգող փոփոտ ընկերով կը մատնանչէին հեռուն ծովաբացը սլացելի առաջատանաւ մը, որ ընկղմելու չափ բեռ-

ներին, որոնք յօժարութեամբ ընդունեցին իմ առաջարկութիւնը մի դերասաններից և հասարակութեան անդամներից կազմված խառն ժողով կազմել մեր դերասանական խմբի խնդիրներով զբաղվելու և մի որոշ ու հաշտարար եզրակացութեան յանգելու համար: Հաշտարար ոչ թէ անպատճառ միասին գործելու տեսակէտով, այլ նրանց ապագայ գործունէութեան վերաբերմամբ:

Ես իմ կողմից այդ ժողովին մասնակցելու հրաւիրում մ'վառնայի ազգային յարժարանների ուսուցչական խմբին և Պ. Պ. Միհրան Զգոնեանին, Սուրատ Երանոսեանին, Սեպուր Աղամբանին, Զարպէտէ Զանեանին և Վառնայի հայ հասարակութեան այն անդամներին որոնք հետաքրքրվում են թատրոնական գործով և որոնց ներկայութիւնը կարող են ուղեկալ և վեհալուս խմբի անդամները:

Ժողովը պէտք է սեղի որոնենայ Պ. Տ. Թիւֆէնքեանի «Սէնթրալ» թատրոնական սրահի մէջ, այս կիրակի, ժամը 3ին, կէս օրէն վերջը:

ՎԱՐԴՕ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿԱՐԱ—ՍՈՒՐՁԱ

1854—1902 թ.

(Շար. Ասխուրդ Բիւլեհ)

Կարա Սուրբան Օգիտայից վերադառնալով զբաղվում է հօր հաշիւներով. քայք երաժշտութեան սէլը ներան անընդունակ է դարձնում վաճառականութիւնով զբաղվելու եւ նա մինչև անգամ մեծ վնասների պատճառ է դառնում հաշուապահութեան մէջ անփոյթ լինելով:

Հաշուապահութեան գրքերից անբաժան էին եւ նօթաները, որոնցով նա աւելի էր զղաղվում քան թէ հաշուապահութիւնով:

Մի անգամ նօտաներով պարտագած միջոցին հայրը վրայ է հասնում, խուռ է նրանից նօտաների սեռտակները քացականչելով «ընդհին երբէք մարդ չի դուրս գալ»:

Կարա—Սուրբան ամբողջովին երաժշտութեան էր նուիրվել. նա դաշնամուրի դասեր էր առնում և հիմնադրապէս ուսումնասիրում ու սովորում է երաժշտութեան սօփիան, գրում է երգեր, ածում է Ֆլէյտի վրայ մասնակցում օրկեստրների և վերջապէս քաւական հիտանալուց յետոյ ինքնազուխ գործի է սկսում իր հասակակից երիտասարդներից խմբի կազմելով համբաւներ է սարքում:

1874 թուին լրանում է նրա 21 տարին եւ նա հրաւիրվում է դիւրորագրութեան, քայք առաջին կարգի արտօնութիւն ունենալով ազատվում է Այնուհետեւ մի քանի հանգամանքների պատճառով նրան չէ յաջողվում

գալի մրուրը քամելու: Ու այսպէս անոր մէջ արմատացած անխախտօրէն ոսկեզօծ տենջը սուրբ վրէժխնդրութեան—թշնամու արիւնով մաքրագործելու ծնողական աւատը—, հա կառակ կառավարական ցատկոտ ու մահալճիտ սպառնանքներուն, գարնան յարմար նորածագ արշալույսին չորս ընկերներով «Տէլիբա՛ն Տէրէսի» մէջ աննշմարելի ծովախորշէն առաջատանաւ մը լեցուն ծխախոտով դաշաղի անուրին տակ Սիւրմէնէ կը դիմէր, միանգամայն յաւիտենական իրողվում յարտարարելով Տրապիզոնի թուրք կառավարութեան, որ ոչ մի միջոց ձեռք առնել չը կրցաւ գտնել այդ տիտանի հոյ ապստամբին յաղթական գրացքը արգիւլելու համար:

Կլեզէլ Սարայէն մի քանի հրացան պայթեցուցին: ու Գապուգ—Մէյտանի զօրանոցէն հրանոթ նետեալ կեղծ փորձեր բրին, ու մինչև իսկ պատնայ—Ե թ սպարտներով զօրք թափել ծովը զանոնք հարածելու, քայք ի դերու: Այս ամեն վառանդով ու պատիր վարմունք, ծով չկրած առաջ կուս հեղով հետեւեալ կարմիր յ յնադիրը զրկած էր քաղաքի կուսակալին Արիւնարբուն: Երիտցած ըլլաք որ օրչափ զիս հալածէք այնչափ ձեզ վնասակար է— թողէք որ հանգիստ վորէժխնդրութեան անհրաժեշտ գործը կատարել, որու համար ամեն իրան աչքս առած եմ: Այլ վստահ գիտնալով որ դուք ժողովուրդին յափտակիչն էք և ոչ թէ կառավարիչը ու ձեր օրինքները բոլ ըն ալ ու ամեն ինչ որ կը խորհրդը կը կայուն հայն ջնջելու

գնալ Պետերբուրգ երաժշտական ուսում ստանալու համար: Բայց նա կրկին նուիրվում է երաժշտութեան եւ չնորհիւ իր տոկուն աշխատանքութեան եւ եռանդին նրան յաջողվում է երաժշտութեան ամբողջ տէօրիան անցնել մասնաւոր ուսուցիչների մօտ:

1882 թ. սեպ. 18ին խրմի Ղաւրատու Բազար քաղաքից նա ճանապարհ է ընկնում գէպի Կալկաս հայրի մէջ քառամայն երգեցողութիւնը տարածելու հաստատ համոզումով: Սոխո մ հասնելով իր մտադրութիւնը մի քանի բարեկամների է յայտնում, որոնք ցնորք համարելով խորհուրդ են տալիս հրաժարվել այդ ցնորքից եւ ստանձնել զիւրօրական երաժշտական խմբի կառավարչի պաշտօնը: Բայց Կարա—Սուրբան ուշադրութիւն չէ դարձնում իր բարեկամների ասածներին եւ շարունակում է իր ճանապարհը դէպի Երթնից: Նոյնմիտքին թիֆլիզ հասնելով տեսնում է Գրիգոր Արմբունու հետ, որը ծանօթանալով Կարա—Սուրբանի ծրագրի հետ, շատ ողբերովում է եւ կրկնակի վատում է Կարա—Սուրբանի եռանդը:

Այնուհետեւ Կարա—Սուրբան լրագրութեան միջոցով հրաւիր է կարգում հայ երգիչներին մասնակցելու խմբական երգեցողութիւններին: Նա մասնաւոր միջոցաւ իր գաղափարն է քարոզում իսկ ապրիլի համար մասնաւոր աներում դասեր է տալիս ցերեկները, իսկ երեկները Արմբունու թատրոնում հայոց եւ վրաց ներկա յայտնների անտրականների միջոցին ամող երաժշտական խմբի կառավարչի պաշտօնն է կատարում: Այն տեղ հանգամանքից օգտվելով, նա հայկական երգեր է գրում, որոնք ժողովրդի վրայ լաւ ապարուրութիւն են թողնում: Այս յաջողութիւնից ողբեր-

վրայ, ես ուխտած եմ ձեր իւրաքանչիւր բռնապետական զրկանքներուն ու ըրածներուն միեւնոյն կերպով հատուցանել ու կրկնապատիկը ինչու կապաւնաք, ինչու կը վառնաք ու դառնաճանակաւ միջոցներու կը դիմէք երբ ձեր առջեւ ըմբատ մը, քալ մէկը կը անոնէք որ կը լաղձայ ինք իր ձեռքով ընել այն զոր դուք չէք ուզեր ընել. դուք էք չարիքներու աղբիւրը:

Վրէժխնդրութիւնը իմա է, ես պիտի հատուցանեմ, ահա այս է իմ անդրժելի ուխտը ու Ստաւածային նշանաբանը զոր իմ հայրս ալ մինչև իր մահն ընդգրկեց:

Գարնը ձմրան Օղլուն: Անդ. գ. Ե. ի ըմբատայումի աննախկին ու վրժապոտ ոգի էն կատարաբար արտայայտուած ու վրդովանքն էր այս, որ անկեղծ ու արհամարհական խորշանքով մը անըմբռնելիօրէն ահաբեկած էր Տրապիզոնի խմբի կառավարութիւնը: Այնպէս որ անէն ինքնութիւնը կորսնցուցած ընագործին մղուեցաւ սովորական ներգապատիր խորամանկութիւններու գիմնը ինքզինքը կեալաբի անհանդուր ժելի ստեղծութեան աղապարէլու:

Սակայն այնպէս տարտամ յուսատարութիւն մը եղաւ ամբողջ գերագոյն ջանքերու հետեւանքը: Ինքնագիծու մի իւրաքանչիւր ճիգը իրիւնարբուն հայուն անողոր զարնթ պատճառած էր, որուն մահախոյ հետեւանքներ անտարակոյս ունենալը ամեն ոք կը կանխատեսէր: Ամեն մէկ

ված նա գիշերները գրում էր հեղի- նակութիւններ եւ մշակում էր ժո- ղովորական երգերը: Ա. գ. ժամանակ նա գրում է մօտ 40 զանազան երգեր եւ 33 կարճ նուագ Արշակ առաջինի սրբերութեան վրա, իբրեւ օգտակար երգեր եւ նուագներ համար:

Այնպէս կարա-Մուրզան երկու տա- րի շարունակ քաջաբեր ելով Արծրու- նուց, Ռաֆֆուց եւ Գամառ-Պաթի- պից քաջականամ էր միայն հարցը արծարծելով: Վերջապէս 1885 թ. ներս- դեան տօնին կարողանում է կազմել առաջին խումբը: Մարտ 15ին նրան յաջողում է առաջին անգամ հան- դէս գալ Արծրունու թատրոնում իր կազմած խմբով եւ 22 երգերով: Թատրոնը կիսով չափ լիքն է լինում, հա- սարակութեան դուր են գալիս ժողո- վրդական երգերը: Երկրորդ համարը զբաղւում է յունիս 15ին 20 եր- գով եւ կենդանի պատկերներով:

Այս համերգի առթիւ նա գրում է «Հրեան» «Մարտիականներ» եւ «Հոգի- առեկո» նոր մշակած հեղինակութիւն- ները: Այս համերգները գլուխ բերե- լու համար կարա-Մուրզան յաղթել է շատ արգելքների: Գործի վեհութիւ- նը խոր պատի քաղցր վարձուքը եւ վերին աստիճանի անկունութիւնը կախարհել էր խմբին:

(Շարունակելի)

ԹՐՔԱՎԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Թորքիոյ վաճառականութեան 1901 թուականի համազույցակը հետեւեալն է. Արտահանում՝ մէկ միլիարտ 342,543,955 զրշի. մինչ նախորդ տարին 1,474,549,

739 զրշ էր, ուրեմն 137.905,783 զրշ պակաս(1901ին քան 190 թը- ականինը): Ներմուծումը սակայն աւելցեր է. 1901 թուականին Ռուրքիա մտեր են 2,652,125, 255 զրշի օտար ապրանք, մինչ նախորդ տարուան երկու մի- լիարտ 343,406,657 զրշ. այս ինքն 1901ին 318,721,698 զրշի աւել ապրանք մտեր է թուրք կայսրութեան մէջ:

Սակայն այս թիւերու մէջ հա- շուելու չէ ծխախոտի եւ գինիի արտահանումն ու ներմուծումը: Այդ 1901 թուականին արտահա- նումն է 16,898,915 քիլոկրամ ծխախոտ եւ 7,393,350 քիլոկրամ գինի: Նոյնպէս յիշեալ թուա- կանին թուրքիա մտած են 5,909, 811 հատ Հալանայի սիկարներ, 4,898 քիլոկրամ ծխախոտ, 9,633 քիլ. քիթախոտ, եւ 1,414,733 քի- լոկ. թէմպէքի որոնք մաքսատան գրքերուն մէջ չեն արձանագ- րուած (սքանչելի՛ երկիր... նը- մանց չի կայ, չէ տեսնուած):

Բաց աստի շրջեկաւքերու հա- մար պէտք եղած զանազան նիւ- թերը, երկրագործական գոր- ծիքները, գործարաններու հա- մար պէտք եղած մեքենաները եւ գործիքները նոյնպէս չեն հաշ- ուում, սրոնք մաքսային հար- կերէ կամ իրաւունքներէ ազատ են թուրքիոյ մէջ:

Պէտք է աւելցնել նաեւ որ վե- րոյիշեալ թիւերը ընդունելու է

իրը «մօտաւորապէս» ստոյգ, ո- րովհետեւ թուրքիոյ մաքսատնե- րուն մէջ, ներածելի կամ արտա- տահանելի նիւթերու կամ ապ- րանքներու գնահատութիւնը, առհասարակ, յանձնուած է ան- փորձ եւ նոյն իսկ տգէտ պաշտօն- եաներու եւ գործակաւորներու, որոնք շատ անգամ խիստ նկա- ւելի սխալներ կը գործեն իրենց գատողութեանց եւ կարգաւորու- թիւններուն մէջ:

Վերջացնելէ առաջ յիշենք որ թուրքիան, արտահանութեան տեսակետով իր գործիքն աւելա- ցուցնր է Միացեալ Նահանգնե- րու, Իտալիոյ, Ռուսիոյ, Յունաս- տանի, Ռումանիոյ (որու հետ նոր վաճառականական դաշինքներ կոչեց) եւ Օսթրալիոյ հետ: մէկ խօս- քով՝ աւելի իր մօտ գտնուող եր- կիրներու հետ, իբայց առեալ Ամերիկայէ:

Մէլիք Ս. Դաւիթ Բեկ

Թ Ա Տ Ե Ր Ա Վ Ա Ն

Հինգշաբթի գիշեր, Պէնիւնի նպատին, Պարբայն զբօսնուան ներկայացուցին:

Հիւկօի համբաւուր թաւերա- խաղը ձախողեցու, մէկ բառով. Հայ գերասանները հեռուէն կամ մօտէն ու է գաղափար մը չը յաջողեցան տալ Պրանսուա Ա.ի

խենդուկ, ապականուած, եւ խորհուրդ, բայց սիրուն արքունիքին վրայ: Իրանիկները խա- մաճիկներ էին, անգիտակ իրենց շարժումներուն: Պիմագծու- թիւններու արտայայտութեանցը Պրանսուա Ա. զոր Պապեանը կը ներկայացնէր, բեմին վրայ խենդ թեթեւութիկ: զէվզէկ մարդ մըն էր. մինչդեռ՝ հակառակ իր կնա- բաղձական մեծագորգ թափե- րուն՝ անիկա ամէն պարագայի մէջ՝ իր սրբայական ծանրու- թիւնը պահող դոռոզ, ամբար- տաւան վեհապետ մըն է: Եթէ Պապեան պատմութիւնը սեր- տած ըլլար այնքան որ Շառլ- Բէնի հաւաւոր հակառակորդին նկարագրը իրեն անծանօթ տարր մը չըլլար, անտարակոյս աւելի հմտօրէն, աւելի ճշգրտօ- րէն բեմի վրայ պիտի ներկայաց- նէր զայն, եւ ստորին սալոննե- րու սիրախառնույ, անհամ դտան- տիկ՝ մը երեւոյթը չը պիտի տար Պրանսուայի ամենէն մեծ իշխան- ներէն մէկուն, նոյն իսկ այն գեճ րեւուն մէջ ուր արայալայէլ չեն անոր շարժումները, խօսքե- րը, միտումները:

Եւ յետոյ, Աստուած իմ, ինչ հազուատնոր են ասոնք: Չեմ պահանջեր որ արքայական ոսկե- ճամուկ պատմութեաններ զան հանդիսականներուն աչքերը շը- րայնել: չէ՛. բայց անհրաժեշտ է որ բեմի վրայ դոնէ ճոխութեան

կատարական մաքսային սպասանք- ներն ներգալիս զէվզէլ ծամածու- մով արտասխանեցին ու սունձարձակ խանդավառութեամբ ընդդրուած մին- չեւ ցերեկ առագաստանաւին մէջ իր շրն անձնեալ ընկերներով հանդի- սաւորապէս ծովագնացութիւն մը ը- րաւ նաւահանգստեան բացուելն, մեծ զարմացում պատճառով թիւրա- ւաջ թուրք հանգիստականներու:

Յնայ առանց ժամանակ կորսն- ճելու հողմավար առադասանները բացուելուն ու սանտալը խաղաղ ա- լիքնորհեցարտօրէն ճեղքելով, երե- կոյեան զէմ, Գուլաթայի ամենքնե- րուն մօտեցաւ:

Հրաշքով անսարան մը բացուե- ցաւ: Միմիւն անապակ կապտային վերեւ անողազարդ երկինքը գերա- պայծառ տեւք մը կը շնորհէր, Գա- լաթի զրգանոյ յարեւանդներու կանաչազարդ շրջափծերուն, Պօն- տական այդ գեղեցիկ գիւղաքաղաքը իր ամբողջ սիրտաբեր յասութիւն ծալ- քերով, անոնց իր ամբողջ բացար- ձակ յատմութեամբ տեսնելի էր այդ շինք ու պայծառերանց իրիկուան մէջ: Ու անոնք սեսարաններու գե- ղափմալ ապաւորութիւններու տակ խնայական ու գեղադրական ան- յաջ տեսնելով վառուած երբ կամայ կամայ կը յատմանային ամենքը, զերասուր ակնարկ մը նետելով հե- առն՝ նշմարեցին ծովուն մէջ վերամ- րարձ խաբակ մը ուր մի քանի ու- թեակաւային գիմաստներն ու եր- թեկուցներն ակնյայտնի կը տես- նուէին: Անոնք իրենց գերագոյն

ապագայի ու մտահոգ վիճակի շարժ ուձեւերով բացէ ի բաց կը մասնուե- ին թէ ո՞նի խորհրդաւոր միտութեա- կանութեան մէջ կանայցի, եղջերու- ներու յատուկ հնարագիտական դա- ւեր կը լարուէին:

—Վերջապէս հասանք փսփոսց Ա- րուժան՝ Արիւնարբունի նաւորդ ըն կերներէն մին: Ու պահ մը, իր ը- սածին վրայ հաստատ ըլլալու համար, գինեց շարժին ու երկար տանն պիշ պիշ նայուածքներ ուղղեց զէպի խոր- հրդաւոր խաբակը խոզարկու չըլա- հայեցողութեամբ Յետոյ պաղարիւ- նուժիւմար մը հրամայեց զեկաւար ընկերով կեցնել նաւը ու գտնուելով Արիւնարբունի հեշտանքով ու սար- սափով համախառն ճայնով մը ըսաւ:

—Ամենէն վաւերաւոր տեղն ենք: Այդ մօտակայ խաբակը որ մեր մօտ հողութեան առարկայ եղաւ Վիճիւն միմա Ղըրսըզ Գայա կը կոչուի: Ինչ ատենէն մինչեւ հիմա այդտեղ արիւ- նահեղ շահատակութիւններու սար- սափարկու հրաշակերտութիւն հանդի- սացած է: Հոր կը ընտելին ու կը- թաքէին Պօնտոսի դիմեմ ծովանէն- ները երբ պէտք ըլլար գիշերանց ու եւ է յարձակում ընելու համար: Ին- մա ալ հոս կը քաշուին երբեմն կա- տաւորութեան ամենէն քաջախիտ զօլճիները, որոնք կը կոչուեն թօ- սուն, Ռաշիտ կիւմիւլէկէրուան եւ հա- նըզ Հասան: Եւ շատ յուսալի է որ մեր աչքին երեւցածներն այ անոնք ըլլան, ուստի աչքերը չորս րանալու է:

—Ուրեմն պէտք է չափուինք, պա-

տասխանեց Արիւնարբուն զիստ: Բո- պանական ցնցումով: Պտորաստ- ունեցէ՛ք դուք ալ Ղաչար, Մնացա- կան, Մարգար, պիտո բոնեցէք ձեր քարապիւնաները ու սուրբը պատեա- նէն դուրս հանեցէք շքեղօրէն...

Ու աւելցուց ճարտասան զօրպե- տի մասնախառնկ մարտաշունչ ազ- դուութեամբ:

—Ժամանակ է որ ինձ հետ ձեր քաջութեան որչափութիւնն ցուցադ- րէք: Կոխը մօտալու է եւ անհրա- ժեշտ, ան որ սրտով կրկէսը նետուի ան պիտի ըլլալ շահողը: քաջամար- տիկներու կոխերը միշտ վեհա- պանծ, միշտ յաղթական կըլլան, ա- նոնց քայիւրը միշտ իրիզախ, տիրա- կան են...

Պօսքը անոր բերին մէջ կիսատ մնաց երբ անակնկալօրէն մի քանի հրթիռներ յարկաբար պայծառաչող գալարեթով սպառնականօրէն վեր օ- գին մէջ ցնցուեցան յիշեալ խաբակէն, վը՛՛ վը՛՛: Ու հօգիւ հազ մի քանի վայրկեան սահած էր անոնց վրայէն, կրք քարապիւնաներու դառնագոյ բոմ- բիւնիւր ապագանը իշ զիմայազիւր ու- մով խցեցին գիշերուան անման ան- գորութիւնը, որոնք հիմա ամբողջ գիւ- ղօրայքը արթնցած իրենց խաղալիկ խորաթիւղի քոնէն՝ իր ամբողջ լու- ներով արձագանգ կուտային: Կէս ժա- մէն լուրը տարածուած էր արդ Վրովաթիւն Արիւնարբուն եկած էր: Ու մեծ կոխ մը հիմա տեղի կու- նենար յիշեալ խաբակին շուրջ: Արիւնարբուն իր չորս ընկերներով տաժանօրէն կը ուճակոնէր խաբակը,

որու մէջ հիմա իր քական կատաւա- րութեան ամենէն նշանաւոր ու ա- մենէն յաջ զօլճիները փակուած մնա- ցած էին բաւական մեծ թուով:

Գ.

Գործնանայնի աստղագրոյ երկին- քի վաւերումով հրաշալիաւ լուսնկան սրածախի լուսավաղիտութեամբ հան- դիսատես կըլլար եթերային բարձուն- քէն այն վիճիխաղի իրարանցումին ու մարտագոռ արհաւիրքին, որ հի- մա կը սիրէր Ղըրսըզ Գայաի գիւա- շունչ խարակին ամբողջ շրջակոյց հա- մայնապատկերին վրայ: Ահեղաթուզ կոխը, զոր արիւնարբուն կը մղէր խաբակը բանակեցուած ու սաղմակա- նօրէն գերազանցապէս կազմակերպ- ուած անհաւաւար զօրութեան զէմ ամբողջ Գովաթայի կտրտան երկտա- սարդ բնակչութիւնը ոտքի հանած էր տարակայական սնանական մօ- լուցքի հիասթափումով: Բայց Գան- լը ծիվան Օղլուի մահաշունչ անունը տարագայման արձանացումով հա- մակած էր զանոնք բոլորն սլ տրրա- մահադրոյ ապշու թեամբ, ու ամենքը բարձրաւանդակներ բարձրացած կը գիտէին դայն: զարուբանքն էր ան հանդիւրացած Սեւ-ծովուն վրայ իր այդ անակնկալ երեւումով:

(Շարունակելի)

Լոնսօն Սաւոյ

պատրանքը ներշնչող տարազներ պտտտին՝ երբ խնդիրը արքայ մըն անոր գիկնապահները ներկայացնելու վրայ է։ Տմբունած թախիշի, գունաւոր հինուժաշ կերպաններու անճաշակ և անյարիր կցում մը, ծիծաղելի զարգմանակներով զարգարուն գլխարկներու տատանումը արքայական ու իշխանական գլուխներու վրայ, իրաւ որ տխուր, բայց շատ տխուր գաղափար մը կուտան հայ դերասաններու ճաշակին և ըմբռնումին վրայ։

Պ. տը Քոսէի հանդերձանքը ամբողջ ծաղրանք մըն էր ինքնին, աւելի խոշոր ծաղրանք մը քան իր լայնալիճ փորը։ Ա՛յ կը խնայեմ ձեզի այն վիթխարի գանչիւնները, այն անհասկացողորդ պոռոտները, որոնք պարագան ու տեղը ի՛նչ կուզէ ըլլան՝ դուրս կը պոռթկան այդ մեծազանգուած իրանէն։ Այդ անօրինակ «տիարազոն»-ին քանի մը խազերը կոտորել նետելու է։

Տարազի մասին, լուսագոյնը կրնար սեպուիլ Խրիպուլէինը, որ թագաւորի ծաղրածուի արտաքին տիպարին կը պարտի իր ամբողջ ուժով յայտնութիւնը։

Պէնիւնան՝ Խրիպուլէն էր, աւրելեան «մուգալլիտի» քիչ մը համեմատած ճոռոմութեամբն ու անճաշակ միմոսութեամբը։ Անշուշտ, հայ կատակերգակը ջանաց որքան հնար էր ճիշդ կամ հաւանական տիպարը ցոյց տալ Ֆրանսացի միմոսին, բայց այնքան տարբերը, տէքոռն ու պայմանները աննպաստ մէկտեղում մը ունեցած էին որ ներքային աչքէ մը միայն կրնար չը վրիպիլ միմոսին ու հօրը երկու անհնազանդ տարբեր կողմերը, որոնց փոխնիփոխ արտայայտումը այնքան ակներև, սուր, կակծալի պէտք է ըլլայ որ անպատրաստ ու խակ հասարակութիւն մը իսկ պիտի կարենայ թափանցիլ փրփրող ու եռ և եփող կիրքերուն սաստկութեանը։

Այս յետոյ, դերասաններուն անճարտար կեցուածքները, խակ և թերուս աշակերտի կակաղումները ակներևօրէն յայտնի կընէին հին «Երեւթութեան» մը վրայ նոր խաղի մը՝ յանկարծական այդ յաւելումը։ Խորհուրդ պիտի տայի հայ դերասաններուն՝ նոր թատերախաղով մը ա՛յն ատեն միայն բեմ ելլել երբ Բաւականօրէն զայն մարտած, անոր ոգիին՝ թափանցած ըլլան և համարձակօրէն, անկաշկանդօրէն ներկայացնելու ատակ զգան ինքզինքնին։

Տիկին Յակոբեան Պլանշի այնքան գիւրդին բայց գերազանցօրէն զգայնո՞ գերին մէջ դեպուստեցաւ, դանդաղեց, շտապեցաւ, վրդեօք «նազար» տուինք։ Կո-

րով բացարձակապէս կը պակսի իր ժեստերուն, նայուածքին, խօսուածքին մէջ։ Կարծուր պայմանները որոնցմով դերասան մը պիտի տիրէ իր ունկնդրին վրայ և գերէ զայն։ Տիկինը անպատճառ Ֆիլիքական տկարութիւն մը ունի՝ որ թոյլ չի տար իրեն ամբողջ գեղեցիկ խոյանքովը նետուելու խաղին՝ խանգաղառութեանը մէջ, եւ—այս մասին իր մասնաւոր ուշադրութիւնը կը հըրաւիրեմ—թող ճար մը մտածէ իր ձայնին շեշտերը քիչ մը աւելի առոյգ, կորովի, կտրուկ, ինչպէս ըսեմ, սանկ քիչ մը աւնական ընծայելու։ Կցկտուր, լալկան ճիշտերը, նեղացուցիչ կականները՝ սուր և անհանդուրժելի, տարօրինակ կերպով կը խանգարեն իր է՛ն սպաւորիչ րոպէներուն ազդեցութիւնը։ Յամաս, անվհատ մարզանք մը պիտի կըրնայ գլուխ ելլել այդ ձայնին մերթ անախորժ խաղերուն հետ, որոնք միշտ պիտի արգելք ըլլան իր նոյնիսկ միջակ յաջողութեանը։

Բայց ինչ որ ամենէն աւելի— և մասնաւորապէս իմ— աչքիս զարկաւ, այն ստակալի, աններելի փոփոխութիւնն է զոր դերասանները կը մտցունեն թատերախաղի մը լեզուին մէջ։ Ապահով եմ թէ «Արքայն զրօսուելի» մէջ, ոչ մէկ դերասան իր դեր անխաթար, անխառն, բնագրին հաւատարիմ կերպով արտասանեց։ Վերջապէս մեղք ու ամօթ բան է է Հիւկօի խօսքերուն այդքան գոռահիկ, ստորին, ապուշ դարձուածքներ տալ, վերէն վար այլայլել բնագիրը կամ անոր թարգմանութիւնը։ Մտիկա մէկէն ի մէկ կապուցուցանէ դերասանին ապիկարութիւնը քիչ մը լուրջ թատերախաղի մը մէջ՝ դեր գոց սորվելու և արտասանելու մասին։ Դերասան մը երբէք իրաւունք չունի փոփոխելու՝ հեղինակի մը կողմէ իրեն վստահուած խօսքերը։ Հինգ շարժիլի պիշեր, տաճկական բարքերու յայտարար սոփորական ռաճիկ բացատրութիւններն ու բացազանչութիւններն էին որ բեմին վրայ կանձբեւէին՝ փխխանակ Հիւկօին գեղեցիկ և ընտրական արտայայտութեանց ձեւերուն։ Դերասանի մը սգիտութիւնը, ապուշութիւնը երեւան հանոյ աւելի ակներև պարզօր մը չէ կարելի պանել։ Դերասանի մը առաջին, տարրական պարտականութիւնն է յարգել հեղինակը, որուն գործը հանրութեան առջեւ կենդանացնելու ազնիւ և ազուր պաշտօնը ստանձնած է։

Պէնիւնան անդամները թող աղէկ մը միտու ընին պահեն այս դիտողութիւնը, եթէ չեն ուզեր որ ուրիշ առթիւ այս տգեղ նիւթին վերադառնանք, որ հիմնապէս անպատուաբեր է իրենց համար։

Ա. Զ. Գ. Վառնայի հայ երգեցիկ «Թող թան» խումբը իւր անուիին նուագահանդէսը պիտի տայ յառաջիկայ շաբաթ երեկոյ Սեպտեմբեր 14ին «Սանթրալ» սրահին մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանական իրատեով մը միջազգային առողջապահական խորհրդէն պահանջուեր է Եզրիպտոսէն եկած նաւերը 15 օրեայ քարանձինայի ենթարկուին։ Խորհուրդը բողոքեր է։

— Բ. Դուռը դեպքաններուն նօթա մը սուեր է օրով կը հազորդէ թէ օտարահպատակները թուրք հպատակներու պէս ձկնսր սուլթան իրաւունք պիտի ունենան, միայն այն պայմանով որ տնօնք ալ թուրք պատժական օրէնքներուն պիտի ենթարկուին։

— Ըօրանտօ—Թուպիլի պարտքին վեցերորդ մասին ժամանակն ալ անցաւ և պարտքը չը վճարուեցաւ։

Թ Ո Ւ Ս Ի Ա

Բեյրութի քաղաքի կը հազորդեն որ, Թուսական ծայրագոյն արեւելքի մէջ քօլէրան դադարելու վրայ է։

— Թուսական Լեհաստանի քաղաքի մը մէջ ժողովուրդը յարձուկում գործեր է հրէաներու վրայ զօրքը միջամտեր է, ժողովուրդը զօրքը գիմաւորեր է քարերով, զինուորները ստիպուեր են հրացան պարպել։ Քանի մը սպաննուածներ և վիրաւորեալներ կան։

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա Ա

Լահէէն կը հեռագրեն թէ պօէր զօրավարները հաւանականաբար ետ պիտի կենան Եւրոպայի մէջ, պօէրներու ինպաստ գրամ ժողովուրդ համար Եւրոպայի մէջ բանախօսութիւններ ընելու որոշումէն, որովհետեւ Անգլիա խոստացած է պակասը լրացնել։

— Պրիւքսէլէն կը հազորդեն որ Լօնտօնի մէջ կատարուած բանակցութեան անյաջողութիւնը երկպառակութիւն մը առաջ բերած է Գրիկէրի և պօէր զօրավարներու միջեւ ու կը վախցուի թէ Թրանսիլի մէջ խոռվութիւններ պիտի պատահին։

Չ Ո Ւ Ի Ց Ե Ր Ի Ա

Սեպտեմբեր 15 (ն. Տ.) Ժնէի համալսարանի մէջ բացուեր է ազատ մտածողներու ժողովը։ Ներկայ եղեր են 164 պատուի

բակներ, երկու հարիւր ընկերութիւններու կողմէ։

Ժողովը Թրանսաքի նախարար պետ Գոմբի համար, անոր կղերական դպրոցներու հանդէպ բռնած կարուկ զիրքին պատճառով, համակրանքի որոշում մը սուեր է։

Այդ որոշումը ժողովականներու կողմէն ընդունուեր է մեծ խանդավառութեամբ։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքի ոստիկանութիւնը Պոսէն եկած 20 պոլիարներու ներկայութիւնը վստագաւոր համարելով անոնց յայտարարած է անմիջապէս հեռանալ։

Ա Չ Գ

Եւրոպական լեզուներու և դասակի մասնաւոր դասեր կուտայ իր ուսումը Եւրոպա ստացած և նորերը ջուրեղեղեղ վերադարձած Լիսա Ալի խանանց

Դանազի Ըղոյթակի եւ երգի դասեր կուտայ Դուքան Ալի խանանց

Պայքանակ փողոց թիւ 8, Վառնա։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սկսու հրատարակուիլ Թրանսաքի նշանաւոր փրկասաններէն Լուիսուաբի

«ԱՆԻՐԵՍԱԼ ՊԱՆԴՈՎԸ»

Գերազանցապէս հետաքրքրաշարժ Ամէն քաակարգի դիւրամաշիւր ըլլալու համար՝ գիրքը երկու մասով երեւան պիտի ելլայ (մէկ հատորի մէջ) և ամբողջութիւնը 52-54 թերթի պիտի բաղկանայ։

Իւրաքանչիւր մասին բաժանորդագիրն է Վառնայի համար 1.25, ուրիշ քաղաքներու և արտասահմանի 1.50։ Իսկ ամբողջութեան բաժանագիրն է, Վառնայի համար 2.50, և Վառնայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն առաջուան պէս՝ 8 երեսնոց պրակին՝ 5 սանթիմիլ։

Սմէն քաղաքները և կամ գիւղերը ուր մէկէ աւելի բաժանորդ ունինք, միայն մէկ հասցէի ամէն շաբաթ երկու պրակը մէկ ծրարով պիտի զրկուի, իսկ առանձին բաժանորդի պրակները 6 հատը մէկ ծրարով պիտի զրկուի։ Փոփոխութիւնը կէտք է դիմեն հետեւեալ հասցէին՝

Տպարան Ալեքեանցի

Օճնիկ Բարսեղեան

Վառնա պոլիարիս

Դրանի փոխարեւ Լախիպոյոզլ Քի կընդունուի։

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взглядъ“ Варна.